


THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿԵՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 69 ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ՄԱՐՏ 4 1899 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՏԵԳՐԻՍԻ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ուրախ ենք ծանուցանել մեր բաժանորդաց ու բարեկամաց թէ՛ ՏԵԳՐԻՍԻ ընկերութիւնն յաջողած ենք կազմել: Նորակազմ ընկերութիւնն այս թերթ մամուլը յանձնուած ասին իր նոր վարչութիւնն ու խմբագիրը ընտրած կըլլայ անշուշտ, և կըստանձնէ թերթին հրատարակութիւնը՝ յաջորդ թիւէն սկսելով:

ԳՈՒՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Անցեալ Երկուշաբթի երեկոյ Եւրոպայի քաղաքացիական տուփը բացուելով՝ քուէներն համրուեցան ինքերկայութեան Յանձնախմբի անդամաց: Արդիւնքն է հետեւեալը:



ՁԵՅԹՈՒՆԻ ՍԻՒՆԱԿԸ ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՆԴԵՍՆ Ի ՊՕՍԹՈՆ

Ձէյթուների ի նպատակ հանդէս մը ունեցանք երէկ երեկոյ: Հակառակ անձրևոս եղանակին՝ խուռն բազմութիւն մը ներկայ էր Բալէաստան սրահը, որ զարդարուած էր հայկական դրօշակներով և լուսատիպերով:

մար: Տեղւոյն ունեւոր դասակարգը իւր բացակայութեամբ կը փայլէր: Պարտիմ ըսել թէ՛ Նորմի ճաշարանի յանձնարարը հանգանակութեան չը մասնակցեցան, որովհետև անոնք ուրիշ առթիւ այդ մասին գումար մը հանգանակած էին իրենց մէջ:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ Ի ՆԿԱՍՈՒ ՁԵՅԹՈՒՆԻ ԿԱՐՈՒՆԵՐԸ:

Ինչպէս ծանուցուած էր, ահա այս Շարաթ երեկոյ տեղի կունենայ ի նպատակ Ձէյթուների արուելիք դէպքը: Վարագայրը կը բացուի ժամը ճիշդ Տիւն:

Դէպքը լմնալէն ետք՝ կատակերգութիւն մը պիտի ըլլայ:

Դադարներուն մէջ Նուագաձուայն ի նպատակ պիտի նուագէ Եւրոպական ու Հայկական եղանակներ:

Օր. Հայկանուշ Գոսթիկեան եւ Տ. Բիւզանդ Գոսթիկեան պիտի նուագեն ու երգեն:

Բոլոր արարքները լմնալէն ետք՝ փափաքողներն կրնան հոն կենալ եւ պարել:

Նկատելով որ մեր հայրենակիցներէ ոմանք՝ նիւթական փափուկ կացութեան մէջ են, Յանձնախմբումը որոշեց որ այդպիսեաց գիւրութիւնն ըլլալու համար՝ սրահին դրան քով 25 սէնթիմոն տոմսեր վաճառուին:

Մենք տարակոյս չունինք թէ՛ դէպքը եւ հանդէսը իրենց ամբողջութեամբ յաջող և խիստ զուարճացուցիչ պիտի ըլլան. եւ քանի որ Յանձնախմբումը ամեն մարդու նիւթական վիճակին համաձայն՝ կարգադրութիւններ ըրած է, և քանի որ հասցիներն ալ Ձէյթուների մերկերուն ու անոթիներուն յատկացուած է, պատճառ չենք տեսներ որ գրանուին այնպիսիներ, որք ինքզինքնին զրկեն փառաւոր ներկայացումէ մը, զուարճալից կատակերգութեան մը, խնդալից երեկոյթէ մը, ու միանգամայն զլանան Ձէյթուների կտոր մը հաց սալ՝ իրենց զուարթանալուն միջոցովը:

Մտից գին \$ 1.00, 75, 50 և 25 սէնթ Օթեակ՝ 5.00 Տօլար:

Լիբիք Հօլ, 623-627 6րդ ափսիւ, 42րդ փողոցին մօտ, Նիւ Եորք: Ծարաթ երեկոյ, Մարտ 4: Թատերասրահը պիտի բացուի ժամը 7 1/2:

Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ձինաց պետութիւնը կանոնադրապէս Ձինաստանը մաս մաս ծախելու ելեր է: Այս անգամ ալ ՍանՄըն ծոցը 90 տարուան ժամանակամիջոցի մը համար Իտալիոյ յանձններ է:

Սուլթանը սպաննելու նոր փորձ մը կատարուեր է՝ կըսուի թէ հրազէն իսկ պարպուած է վրան, սակայն առանց յաջողութեան: Ոստիկաններ

րուն յանկարծակա՛ն ու անխոհեմ իրարանցումին պատճառաւ դաւադիրները յաջողե՛ր են փախչիլ: Փախչողներուն մէջ են նաև նախարարական երկու տղաքը, որոց համար կը վախցուի թէ «Երեսօտարը թիւրք» րուն պիտի միանան:

Սուլթանին ուրիշ փորձանք մը ելեր է այս օրեր: Փախուողներն իշխանուհին, որ անգլիացի սպայի մը հետ ամուսնացած է և երկու որդիներ ունի, ինքզինքը հռչակած է իբր Բիւզանդական կայսրութեան ժառանգորդ: Ինուսիոյ Ս. Սինթը վաւերացուցեր է իշխանուհին Բիւզանդական կայսրութեան սերունած ըլլալը: Նորին կայսերական բարձրութեան մեծազայն բաղձանքն է՝ կերպով մը ամբողջ թիւրքայի և Յունաստանի կառավարը ըլլալ:

Ս. Սինթը, իւր գործառնութիւններովը կը ցուցնէ թէ՛ որոշած է վեր բռնել Բիւզանդական հարստութիւնը և հսկել իշխանուհին իրաւունքներուն վրայ, յուսալով թէ Արևելքի մէջ կարիւր է վերակազմել կայսրութիւն մը, որ իբրոյս սրտէ նուիրուած ըլլայ Յունական եկեղեցւոյ շահերուն:

Բիւզանդական կայսրութիւնը, որ կոչուած է նաև Արևելեան կամ Յունական կայսրութիւն, ծագում առած է Յ. Տ. 395ին երբ Հռոմէաց կայսր Սեմ թէոդոսիոս իր մահուան ատեն՝ կայսրութիւնը երկուքի բաժնեց իւր երկու որդիներուն՝ Արքատիոսի և Հոնորիոսի մէջ: Վերջինս արեւց Սիւրիոյ, Փոքր Ասիոյ, Թիւրքիոյ, Նիպոտի, Մակեդոնիոյ, Կրէտէի և Յունաստանի, մայրաքաղաք ունենալով Կ. Պօլիսը: Ահա այսպէս կազմուեցաւ Բիւզանդական կայսրութիւնը և որ վերջացաւ 1453ին:

Լուր կայ թէ Փիլիպեան յեղափոխական բանակին պետը Ակուրնալտո արամադիր է անձնատուր ըլլալու զօրավար Օթիսին:

Մովակալ Տուրի հեռագրած է այն մեծ մարտանաւին համար, որ վերջերս Հոնոլուլուի քով կը գըտնուէր: Թէ՛ «Օրիկոնը փութով հոս զրկեցէք. քաղաքական պատճառ կայ»: Այս հեռագիրը սխալմամբ դուրս տրուած է: Առ հասարակ կը խորհուի թէ Գերմանիայ այն կողմերը սոսնձագութիւն ընելու կը պատրաստուի, և այդ պատճառաւ է որ Տուրի կուզէ ինքզինքը զօրացունել՝ Օրիկոնի պէս աշխարհի հրամանն արժանացող մարտանաւ մը աւելցունելով իր արդէն բաւական զօրաւոր նաւատորմին վրայ:

Լուր կայ թէ Չարը անձնական տկարութիւններու պատճառաւ չի կրնար պետական գործերուն նայիլ: Ուստի իր հօրեղբայրը՝ Միքայէլ մեծ դուքսը կը նախաւաճէ պետական ժողովին, ու գործերուն վերին հրահրութիւնը իր ձեռքն է:

Պապը ծանրապէս հրանդ է եւ կը վախցուի որ այս անգամ չ'ապաքինի:

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

6 Փետր. Փրովիտէնս. Թերթիւք ճճրդ թւոյն մէջ կարդացի Տ. Մ. Կէճէեանի գրած նամակի համառոտութիւնը, ուր ի միջի այլոց՝ իմ անուն ալ յիշուած էր իբր ստորագրող Պ. Արփիարեանի վըճառագրոյն տակ:

Որովհետև այդ խնդիրներու ծագումէն մինչև վերջը՝ իբր կեդրոնի ներքին անդամ՝ ես ինքս ներկայ էի, յանուն ճշմարտութեան՝ կուգամ խնդրել պատուական խմբագրութենէդ, որ հաճիք շտկել հետեւեալ նըշանակելի սխալները:

Առաջին՝ ես Պ. Արփիարեանի վըճառագրոյն տակ բնաւ չեմ ստորագրած, ալ ընդհակառակը կեդրոնի գործերը կանոնաւոր կարգադրութեան մը վերածելու խնդրոյն նախաձեռնողը և առաջին բողոքողն եմ եղած՝ տակաւին Պ. Արփիարեան Լօնտոն չը հասած:

Երկրորդ՝ վահանձեան անուն անձ մը բնաւ գոյութիւն չէ ունեցած Հնչ. Կուսակցութեան կեդրոնի մէջ, եթէ նամակագիրը Պ. Օհանջանը ըսել կուզէ, այն ատեն Պ. Կէճէեան լաւ յիշելու էր որ Օհանջանը այդ ժամանակ Ամբրիկայ կը գըտնուէր և Լին քաղաքի եկեղորիկի գործարանին մէջ կ'աշխատէր:

Երրորդ՝ իրաւ է որ Պ. Արփիարի նամակներէն մի քանին կամ անոնց ընդօրինակութիւնը Լօնտոն նազարպէկին զրկուած են, սակայն այդ նամակները ո'չ թէ վնասակար անհատներու գրուած էին, այլ նոյն ինքն Կ. Պօլսոյ մասնաճիւղի վարչութեան, որուն անդամներէն մին էր և ինքը՝ Պ. Արփիարեան, երբ Պօլսո կը գըտնուէր: Եւ որովհետև Պօլսոյ մասնաճիւղի տնօրինութեամբ Արփիար կեդրոն կուգար՝ քանի մը կարեւոր խնդիրներ կարգադրելու, տեսնելով այդ կեդրոնի քառասյին դրութիւնը՝ իր մասնաճիւղին կը սեղեկագրէր ինչ որ տեսած էր, և անոնց նոր կարգադրութեան ու հրահանգին կապուէր: Սակայն Պօլսոյ մասնաճիւղին մէջ այդ ժամանակ պատահում մը առաջ գալով՝ այդ նամակները նախարարպէկեանին կը զրկէին և բացատրութիւն կը պահանջէին: Նազարպէկ խնդիրը իր սաղմային դրութեան մէջ խղճելու յուսով՝ անմիջապէս իր առաջին գործը կընէր անուանարկութեամբ մը մրտուել այն անունը, որուն գիտէր թէ պիտի արձագանգէին և ուրիշ տեղերէ, քանի որ այդ փառաւոր անունի դէմ չար նախանձէ գրողուած լարում մը կար:

Սա ևս ըսելու չը մոռնամ թէ Պ. Կէճէեան Ձէյթուներն ո'չ զէնք և ո'չ ալ դրամ փոխադրելու ամբաստանութեամբ ձեռքարկուած էր:

Ս. ՍԱՐԻՆԵՆԱՆ

Ա.Ձ.Ղ. Ձէյթուների հանդէսին առթիւ՝ Ազատ Լսարանը գոց պիտի մնայ վաղը:



ՇԱՐԱԹԱՌԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,  
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - Խմբագիր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ  
ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ  
ՏԼ. ՍՄ. Տարեկան 10 Փրանք.  
Տարեկան 1 50  
Վեցամսեայ 75 Բաժանորդագրին կԱՆՆԻԿ  
Յուսմանայ 40 վճարելի է միշտ:

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝  
To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City  
Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՒՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՄԱՐՏ 4, 1899.

ԱՐՓԻԱՐ ԴԱՒԱՃԱՆ ՄԸ ՉԷ՝

(Շարունակութիւն և վերջ)

«Պ. Արփիար Արփիարեան թէպէտե ընկերական անկեղծ դիտարկութիւններով եկած էր կեդրոն, բայց Պ. Պ. Աղաթի, Ապահի, Սուրէնի և նոյն իսկ Հրաչեայի կողմէ կեդրոնի դէմ եղած քննադատութիւնները լսելով, առանց իրենց հետ խորհրդակցելու և համաձայնութեամբ գործելու, փութացած էր իր յարաբերութիւնները լսելի կեդրոնի հետ, և ասիկա իրենց կողմէ ընկերական համարաշտութեան դէմ գործ մը նկատելով՝ ստորագրած էին յիշեալ վճռագիրը, բայց յետոյ տեսնելով որ իրենց օրինաւորութեան շահերն մէջ ըրած դիտարկութիւններն ալ արհամարհուած և անլսելի մնացած են Նաղարէկեաններու կողմէն, դատապարտելի չեն նկատեր Պ. Արփիարի ընթացքը, և հետեւաբար ու է առարկութիւն մը չունին իր ժողովին մէջ ընդունուելուն դէմ:»

Այս խնդրոյն վրայ աւելի զօրաւոր ըլլալով սփռուելու համար, հակառակ մեր անձուկ սիւններուն, կարտապանք հոս Պ. Մ. Տամատեանի կողմէ գրուած պաշտօնական նամակի հետեւեալ մասը, որ վճռագիր անուանուած ամբաստանագիրն կ'ըստանայ մի անգամ ընդ միշտ:

«Պր. Արփիարի խնդրին համար երկու խօսք ըսել պարտք կը համարին: Նաղարէկեաններն, որոնք ինչպէս յայտնի է այլևս, իրենց անձնական դիտարկներուն մէջ յաջողուելու համար ամեն միջոց ներելի կը գտնեն, և երբեք իղծի խայթ չեն զգար խնդիրները խելագիրելու և ասոր անոր անձին ու պատուոյն դէմ ձրի և ամենէն սուկալի զըրպարտութիւններ ընելու մէջ: Նաղարէկեանները օգտուելով Պ. Արփիարի դէմ հանուած վճռագրին այն պարբերութեան թէ «Պ. Արփիար կուսակցութեան վերաբերեալ այլ և այլ խնդիրներ և գաղտնիքներ երևան է հաներ այս կամ այն և մինչև իսկ կուսակցութեան օտար անձերու աջակցութեամբ անամօթաբար հրատարակուելու կը յայտարարեն թէ Պ. Արփիար իբր լրտես և մատնիչ արտաքրուած է Հնչ. կուսակցութեան: Այդ լրտորովին սուտ և զրպարտութիւն է: Վճռագրին մէջ Պ. Արփիարին վերագրուած գործը - Անխորհրդապահութիւն է, կարգապահութեան դէմ կուսակցութեան դէմ մտաւորութիւն մ'է, և ոչ բնու մատնութիւն կամ դաւաճանութիւն: Ամեն ոք կը մտնէ թէ այս երկու բառերուն (Անխորհրդապահութիւն — Մատնութիւն) մէջ ընդ տարբերութիւնը անհուն է և մէկը միւսին հետ երբեք չի կրնար շփոթուիլ: Կրնա՞ս գաղտնիք մը երևան հանել ըտրորովին բարեմտութեամբ, կրնա՞ս խօսած կամ գրած ըլլալ այնպիսի մարդու մը, որը թէ և ամենավստահելի անձ մը ըլլայ, բայց Հնչակեան չըլլայ, կրնայ այդ անխորհրդապահութեան ալ ամենին թիթ և փնտ մը շտապ և կամ չըլլալ, բայց այդ դարձեալ կանոնադրանքութիւն մըն է և ոչ աւելի բուն մը, և այդ կանոնադրանքութիւնն ալ — թողունք որ կատարելապէս հաստատուած տլ չէ — լրտորովին կարգարանայ, երբ գիտցուն թէ Պ. Արփիարի միակ նպատակն եղած է Նաղարէկեաններու զեղծումներուն և փնտասկար ուղղութեան մերկացումը, այդ չարեայ դէմ դարձան մը տանելու համար: Այդ վճռագիրը ստորագրուած ժամանակ ո՛չ ձեր փոխանորդին, ո՛չ Աղաթիին և ո՛չ Ապահին մտքէն կանցնէր թէ այդ խօսքերուն այդ շարաշուք նշանակութիւնը պիտի արուի մի օր Նաղարէկեաններու կողմէ, թէ այդ խօսքերով ամենասուկայի զըրպարտութիւնը պիտի բարդեն Պ. Արփիարի անձին վրայ և մեր ստորագրութիւններն ալ վկայութեան պիտի բերեն՝ ի հաստատութիւն իրենց անխորհրդ խելագիրութեան:»

Այս վկայութիւններն ու քաղաքածները լսելէ ու տեսնելէ վերջ՝ արդարադատ մէկը այդ վճռագրին մէջ ալ զօրութիւն մը չի տեսներ ամբաստանութիւնն հաստատող, որ թերևս նոյն ամբաստանութիւնն ալ չէ, ինչ որ ամբաստանողք կը խոստանային օտարմաններով հաստատել:

Վերջացնելէ առաջ ուրիշ կէտ մ'ալ որ այս վճռագիրը տապալելու զօրաւոր զէնք մ'է ամբաստանելոյն համար: Այս Նաղարէկեան վճռագիրը եթէ արուած ըլլար ամբաստանելոյն բոլոր բացատրութիւններն ալ լսելէ վերջ՝ ըստ օրինի՝ բեկեալ նկատուելու էր այժմ, քանի որ զայն ստորագրող 8 անձանց երեքը հակառակը կը պնդեն հիմայ, և ուստի բեկեալ վճիռ մը, եթէ երբեք կարելի է վճիռ կոչել զայն, ապացոյց մը չէ ամբաստանելու մը առջև: այս ընդհանուր օրէնք է. և հայ կուսակցական քմահաճոյքները ներելի չեն ամեն օրէնքէ վեր զատուիլ ու յամառաբար պնդել ամբաստանութեան մը վրայ, զոր կարելի չեղաւ ցարդ ապացոյցանել՝ գոնէ մասամբ:

Ինչպէս որ ըսած ենք ժամանակին՝ մենք Արփիարը չենք ճանչնար, և ոչ ալ անոր դատին փաստարան լինելու հաւանութիւնն ունինք, արդարութիւնն է միայն որ կը մղէ մեզ զրել մեր համոզումները, որք գոյացած են թէ ՏԻԳՐԻՍ և թէ Եւրոպական հայ թերթերու մէջ այս մասին՝ հրատարակուած նամակներէ: Մենք չենք գիտեր թէ Արփիար դաւաճան է. ամբաստանողներն ալ չի կրցին զայն ապացուցանել, կամ լաւ ևս՝ փոխուտ տուին հրատարակ գալէ: Չի դատապարտուած ամբաստանելու անմեղ օրէնքի սուղև, իսկ այս ամբաստանելոյն դատը աւելի զօրաւոր է, վասն զի՝ հակառակ ընդհանուր սովորութեան՝ ամբաստանողք մէջ տեղ չեղան սակաւին. ուրիշն հետեւելով ընդհանուր օրէնքներուն՝ պարտաւոր ենք պատասխանել մեր հին հարցմանը՝ ըսելով թէ.

Արփիար դաւաճան մը չէ:

ՔՆՆԱԿԱՏՈՒԹԵՆԷ ԻՆՉՈՐԴ ԿԸ ՎԱՆՆԱԿ

Տասնևիններորդ դարուս մէջ ժողովրդին տարած էն մեծ յաղթանակը խղճի, խօսքի ու մամուլի ազատութիւնը է: Այս յաղթանակին առջև ինչ գահեր, ինչ թագեր ու ինչ ահեղ լուսակներու ուժեր ջանջալուծուած են: Հետ ինչ պապեր, ինչ կայսրեր և ինչ բռնակալներ կորաքամակ խոնարհեր են, և ժողովուրդը իւր յաղթութեան դրօշը պարզած՝ ինչպէս յաղթանակէ յաղթանակ յատուցած է: Սակայն մեր ժողովուրդը, չնո գիտեր ինչ հոգիներ մղուած՝ կը ճգնի այս փրկութեան հզօր դիցուհին՝ դէմ կուսիլ, ա՛նոր արեւագիւր երեւոյն ցելս, մուր և լուսանք նետելով:

Մեր ժողովուրդը ըլլալով ամենէն աւելի խարկանքներու գոհ, եթեարկուելով ամենաառեւելի ճնշումներու, նարկութիւններու և գերութիւններու, ըլլալով ամենէն աւելի ազատութեան, խօսքի, խղճի ու մամուլի ազատութեան կարօտ ժողովուրդ, ոչ ոքի անգիտակցութիւնով մը ասոնց դէմ մարտնչելու կեղծ՝ աստիութիւն, զգուանք ու արհամարհանք արտայայտելով ազատ քննադատութեան դէմ:

Քննադատութիւնը այն լոյսն է, որուն մէջ խարերայութիւններու - միջբողոքները չեն կրնար ապրիլ, ու ասոր համար է որ տիրողները միշտ սրբութեան քօղը առած են վրանին ու ժողովուրդը զինած են քննադատութեան իրաւունքին դէմ, որով անքննադատելի միջնորդ մը ըստեղծած են իրենց շուրջը, որուն մէջ ապրեր են մարդկութիւնը թշուառացնող բոլոր միջբողոքները: Նոյն կերպով վարուած են մեր կղերները — իբրև դատաւար — իրենց անպայման տիրապետութիւնը ապահովելու նպատակաւ: Ինքզինքնին իբրև սրբութիւն սրբութեանց ներկայացուցած են: Երկուսից, անմատչելի, անքննադատելի: Մեղք է եկեղեցականն դէմ խօսիլը. ահա՛ անողորմ պատուհասը ամեն անոր՝ որուն մտքին մէջ ո՛ր և է քննադատութիւն մը կ'արթննայ կղերի մը դէմ:

Ինչ էր սոսնց ՏԻԳՐԻՍԻՆ դէմ ունեցած այդ մեծ ցատու մին պատճառը, եպիսկոպոսն է քննադատեր, Տապանակ ուստիին, սրբութիւն սրբութեանցին դպր է. ուստի պէտք է որ Աստուծոյ պատուհասովը զարնուի, պէտք է քարկոծուի, պէտք է մեռցուի: . . .

Այս արգահատելի դատաւարքը այնքան կուրու թեմաբ կուր կը մղէ քննադատութեան դէմ, որ նոյն իսկ ամենէն անմեղ ու անվիճելի իրաւունքին վրայ զայնպիսի կատաղութեամբ մը կը յարձակի: ՏԻԳՐԻՍը տեսնելով որ եպիսկոպոսին դէմ ժողովրդեան մէջէն հակակրանքի զօրաւոր հոսանք մը կայ, ուղեց գիտնալ թէ այդ հոսանքը համակրանքի հոսանքին հետ ինչ համեմատութիւն ունի. ուստի այս նպատակաւ քուէարկութիւն մը բացաւ իւր էջերուն մէջ: Եթէ արդիւնքը ցուցնէր թէ համակրանքի հոսանքը աւելի մեծ է, առէ՛կ. մենք ալ կ'ըստիպուէինք յարգել այդ մեծամասնութեան վերաբերմունքը, իսկ եթէ ընդհակառակը ապացուցուէր, մեղք էր գիտնալ ճշմարտութիւնը: Եթէ եպիսկոպոսը և իր խեղճ բարեկամները եպիսկոպոսին ժողովրդականութեանը վրայ ապահով էին, ուրախ պէտք էր ըլլային որ այդ ճշմարտութիւնը լոյս աշխարհի մէջ յայտնի կ'ըլլար. իսկ եթէ անժողովրդական է, եթէ անհամակրանքի է, եթէ ժողովրդեան սիրոյն ու վստահութեանը արժանի չէ, այդ չարիքը սրո՛ւ սիրոյն համար պէտք էր մութի մէջ պահել: Արդեօք անխարդախ ոսկին ունեցողը կը վախնայ իր ոսկին փորձաքարի զարնել տալէ: Մեր նպատակը փորձ մը ընել էր միայն. ուրիշն ինչո՞ւ վրդովեցաւ եպիսկոպոսը, ինչո՞ւ զայ-

րացան անոր խելօք պաշտպանները, չէ՞ որ այդ կերպ վարմունքին կը ցուցնէ թէ իրենք իրենց տարանքին վրայ ապահով չեն:

Մեր ամենէն մեծ մեղադրանքը եպիսկոպոսին իրեն է, որ այդ քուէարկութեան փորձին վրայ բոլորովին գլուխը կորսնցուց: ՏԻԳՐԻՍԻՆ Խմբագրին հետ ձեռք թոթուելը մերժելէ աւելի փոքրագի միջոցի դիմեց՝ ՏԻԳՐԻՍԻՆ վրէժ լուծելու համար. Տեղուոյ Հոգաբարձութեան ու Տիկնանց Որբախնամ ընկերութեան թեղաբերով որ իրենց յայտարարութիւնները ՏԻԳՐԻՍԻՆ ապիւ չտան՝ ներթափան փոքրիկ փնտ մը գէթ հասցնելու միջոցառանքին համար. մինչդեռ մենք՝ սակէ շատ աւելին յանձնառնելով էր որ մեր պարտականութեան հետեւեցանք:

Եթէ մենք Սարաճեան եպիսկոպոսէն մասնաւոր կարողութիւններ պահանջելու իրաւունքը չունինք, արդեօք իրաւունք չունինք հարցնելու թէ իր կղերական վեհանձնութիւնը և իր հայրական ներողամբութիւնը ո՞ր աստիճանի կը հասնի: «Եպիսկոպոսը կուզէ՞ք կամ չէ՞ք ուղեր» հարցունելին ինչ աստիճանի մեղք է, երբ գիտնաք, այն ատեն մեր այդ մեղքին դէմ՝ եպիսկոպոսին ցուցուցած վարմունքէն կրնաք ճանչնալ իր ոգին:

Մենք մեր բացած քուէարկութիւնովը եպիսկոպոսին ժողովրդական կամ անժողովրդական ըլլալը գիտնալու ելանք և ահա սակէ զատ աւելի ձախող բան մը երևան եկաւ իր վրայ, իր սուկալի նեղմտութիւնը, աններողութիւնը, դիւրագրգռութիւնը, քրնախնդրութիւնը եւ փոքրոգիւթիւնը, սրտնք ամեն շարեաց արմատն են: Եպիսկոպոսը մոռնալով իր լսելու կը լսցուի, տեսնելով որ մենք՝ իր կարող կամ անկարող, ժողովրդական կամ անժողովրդական ըլլալը խնդրայ առարկայ կ'ընենք: Ան իր անձը կը հոգայ, մենք ալ կը ցաւնք սր կարող, ժողովրդական և օգտակար առաջնորդ մը չունինք: Եթէ սխալ ենք մենք, եպիսկոպոսը հակառակը ապացուցանելու էր՝ իր վարմունքովը, իր կեանքովը և իր գործովը:

Շատերը գիտեն թէ՛ նիւ Եօրք ձըրնըլը որպիսի՛ անարգապաս ու ծայրելի նկարներով կը խայտառակէր Հաննա ծերակուտակալը. օր մը այդ նկարները շինող անձը ներկայացու Հաննային, որը խիստ սիրալիլ ընդունուելութիւն մը տուաւ անոր. հետք խօսեցաւ, խնդրեց, կերպու ու խըմեց, միայն թէ երբ որ մտքը պիտի մեկնէր, ծերակուտակ անդամը անոր ըսաւ. «Ձըլլայ որ Տիկին Հաննայի աչքին երևաւ, որովհետեւ նա այնքան զայրացած է քեզի դէմ, որ եթէ քեզ տեսնէ՛ գլուխդ պիտի կտորէ»: Այո՛, սրովհետեւ նա կին է եւ ունի կանացի բնութիւն: ՏԻԳՐԻՍը Սարաճեան եպիսկոպոսին հետ երբեք ձըրնըլի Հաննային հետ վարուելուն պէս չ'վարուեցաւ: Եթէ ձըրնըլը ՏԻԳՐԻՍԻՆ պէս վարուած ըլլար, տիկին Հաննան ալ ձըրնըլին մտքը պիտի հիւստիւրէր՝ ճիշդ իր վեհանձն ու ազնիւհոգի ամուսնոյն օրինակին պէս: Արդ եթէ մեր առաջնորդը՝ Հաննային ոգիէն մանանի իր հատ չափ ալ չունի, տիկին Հաննայի չափ ալ չըլլայ: Աստուած իմ . . . ալ ո՛ւր պիտի առաջնորդուէինք յայտնի է, և ինչո՞ւ մեղադրուինք որ այդպիսի վախճանի տարուելու համար չենք հետեւիլ այդպիսի անձի մը: Մենք պատրաստ ենք նոյն իսկ իրեն հետեւելու՝ եթէ առաջնորդի վստիլ ոգի և ընթացք ցուցնէ: Մեղաւոր ենք:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Նիւ Երբքի Հնչակեան մասնաճիւղը հրապարակային ժողով մը ունեցաւ անցեալ Երբքի երեկոյ, ուր 350է աւելի երկսեռ բազմութիւն մը կար: Այս ժողովին աւելի հանդիսի կերպարանք տրուած էր՝ զայն շինիչ ու միանգամայն զուարճացուցիչ բնուէն նպատակաւ, որոյ յաջողութեանը վկայեց ներկայից միահամուռ խանգարմանը թիւերը: Իրաւ որ այս ժողովը իր լիակողմանի յաջողութիւնովը՝ առաջինն էր Նիւ Երբքի հայոց համար: Նոյն յաջողութիւնը կը մաղթենք ասկէ ետքը սեղի ունենալիք ժողովներուն համար:

Ատենապետը կոկիկ բանախօսութիւնով մը ժողովը բացաւ: Նախագահը Արթ. Սարգսյանը գեղեցիկ յորդոր մը կարդաց. Պատ. Սարգսյանը, որ Ամերիկայի հայոց մէջ միակ կրթութեամբ պատրաստուած երգիչն է. իւր թրթռուն, հանդիպելի ու զօրուար ձայնովը երգեց պարբերաբար, ու նուազեց՝ ջերմ ոգեւորութեամբ համակելով ժողովուրդը: Օր. Մարտիկեան և Տիրաք Ե. Արսէնեան ու Հ. Մարտիկեան գեղեցիկ արտասանութիւններ ըրին՝ արժանանալով ժողովուրդեան բուն ծափաւարութիւններուն: Երգեց նաեւ Հայ օրհորդ մը, որոյ ճկուն, սոյլ ու աղու ձայնը՝ արուեստին բոլոր ներբողութիւններովը խանգարմանց ամենուն սրտերը: Նոր կեանքէն (Աղբիւս Բարեբարները) կատակերգութիւնը ներկայացուցաւ 7 անձերով, որը յաջողութիւն մ'էր թէ՛ իր տուած դատովն և թէ՛ գերակատարներուն ազնիւ պատրաստութիւնովը:

Տ. Չիթճեան ատենախօսեց՝ նիւթ ունենալով «Մեր Յեզ. ներկայ քաղաքականութիւնը», ցուցուց թէ մեր կրած այսքան ահաւոր աղէտներուն հետ ինչ փրկուէալ յաջողութիւններ ձեռք բերած ենք, զէպի մեր նպատակակէտը սրբան յառաջացած ենք. օրինակ ապով թէ՛ ծառին ծաղիկները կը թոթափին, սակայն իրենց սակեր պտուղի կոնտոր կը թռնուն. ըսաւ թէ՛ Գրեպայի, Տիւրքիստանի և կրէտէի բազմին արեւը օր մ'ալ մեր ճակտին պիտի ծագի, եթէ մեր ուղբային յատկանիչը եղող աննուած, անկուռն ու կորովի կեանքովն անընդհատ յառաջ երթանք յեղափոխական շարժելէն, սակայն ո'չ թէ ցուցամուլ եռանդով, այլ ներքին՝ խորին գիտակցութիւնով մը: Բանի որ մեր կրակը վառ պահելու համար՝ անոր վրայ թափելու անսպառ վառելիք չունենք, խոհեմութիւնը կը պահանջէ որ զայն պահենք մեր գիտակցութեան անթեղին տակ. մինչդեռ եթէ զայն իցոց բերելու համար միշտ մոխիրը խառնենք՝ կը մարի իսպառ, և պարագան եկած ատեն պատրաստակամութիւն չենք կրնար ունենալ:

Այս կարգի շատ մը կենդանի բացատրութիւններով՝ ատենաբանը ժողովուրդեան մտքին գոհացուցիչ ուղղութիւն մը տուաւ. և սրտերուն խորախոյզ ներշնչեց:

Ժողովը զուտ արամաբարութիւնով մը մեկնեցաւ Պատ. Սարգսյանի վերջին երգովը:

ԿԱՐՏԵՆՈՐ ՎՐԻՊԱԿ

Տիկնանց Որբ. Ընկ. հանդիսին տեղեկագրութեանը մէջ՝ կը յուրինք որ Օր. Մանկասարանի մասին գլորուածը սխալմամբ՝ գրաւարը մոռցած էր շարեյ: Պարտ կը համարինք ըսել թէ Օրհորդը՝ իր քաղցրալուր երգերովն ու մանալիկի վրայ ածելովը, հանդիսին յաջողութեանը մէջ մեծ բաժին մը կատարեց:

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսիոյ պաշտօնական թերթը «Վէստոմոսթի» դիտել տուած է թէ՛ զինաթափութեան վեհաժողովին մէջ Հայոց վիճակը ի նկատի առնելու է: —Ինչպէս որ հայազգի նարիման խանը Պարսից վիճակի գեղեցիկ է, իշխան Մեղքոն Սանն ալ Հոռովի պարսկական դեսպան կարգուած է: —Պարբն Գօզէն Գաղղոյ Երեսփոխանական ժողովին մէջ խիստ կծու լեզու մը գործածած է Գաղղոյ կառավարութեան դէմ, որը 98ի Հայոց ջարդերուն ատենը, երբ Անգղիա առաջարկած է Սուլթանին վրայ ճնշուած բանեցունել, ատոր ընդդիմացած է՝ Թուրքիոյ ամբողջութեանը պահպանումին վրայ պնդելով. մինչդեռ միւս կողմէն Հայերուն վրէժը Սուլթանին լուծելու նպատակաւ՝ կըրէտէն ազատ կընեն:

«Եւրոպական» կ'իմանանք թէ կարնեցի և կովկասարեակ հայ մը, որ Պոլսոյ մէջ ըրդի հիւսարան մը ունէր, մօտ 40,000 լուրջի արժողութեամբ, ամբողջովին նուիրած է Կ. Պոլսոյ Ս. Փրկիչ հիւանդանոցին, այն պայմանաւ որ հիւանդանոցի վարչութիւնը հիւսարանը բանեցնելով՝ արդիւնքին մէջ մասը սրբանոցի պահպանութեանը գործածէ, իսկ միւս մասը պահեստի դնելով՝ հինգ տարին անգամ մը սրբանոցի սաներէն մէկը եւրոպա զրգի, որ հիւսուածագործութիւն սորվելով՝ վերադառնայ նոյն գործարանին մէջ աշխատելու:

Հայրենիքէն եկած լուրերը շափազանց սրտամաճիկ են: Այս մարտիկ ջարդուած, տունը տեղը կողպատուած և այրուած ժողովուրդին խնամ մնացորդին վրայ հայցին անտանելի սղութիւնը արեւած է, ու այս ամենուն վրայ, գիւսային կառավարութիւնը՝ առաւելու ժողովուրդին դժոխքը կատարելով ընելու համար, ամեն բարբարոսական միջոցներ գործածելով՝ չորս տարուան տուրքերը կուզէ հաւաքել:

Բաւրէն 300էն աւելի գիւղացիներ մեռած են՝ արքունական ճամբուն վրայ աշխատելով, որոնց ո'չ վարձք տրուած է և ոչ ալ հաց. այս կիրամերկ խեղճերը ցերեկը անօթի փորով աշխատեց, քրտներ ու գլխերը ցուրտին ու անձրեան առջև պտակեր են՝ առանց ո'ւ է ծածկոցի: Ահա՛ թէ մեծ մարդասպանը ի'նչ բարբարոսական նոր հնարներ կը գանձէ՝ Հայերը բնաջինջ ընելու նպատակաւ, և որ նոյն ատեն ո'չ ձայն կելլէ ո'չ շշուշ:

Տօլուրիւրի և Մէյի մէջ զբաւնուող Սարգսյանի Անձնիկ գիւղէն մի քանի երիտասարդներ Ռուսիանարական ընկերութիւն մը կազմած են: Առ այժմ 6 կանոնաւոր անդամներ ունին և 150 տղար դրամ՝ արդէն սկսած են իրենց գիւղի դպրոցին օգնել, ուր անխտիր, յուսուորջական ու բողոքական տղաք կը յաճախեն:

Նուպար Փաշայի յուղարկուութեան առթիւ՝ «Թան»-ին հեռագրուած է հետեւեալը Աղէքսանդրիայէ. «Գազազակիլը կառքին առջևէն կերթային զինուորական նուազած ունեքը, Հայ վարժարանի տղայները և Հայ ու օրթօսաղք եկեղեցականները: Գազազին ետեւէն կ'երթային Լօրս Բըրօմէր, Ստիվի կողմէն իր մեծ արարողապետը Հասան փաշա Ասիմ, Պօղոս Պէյ, հանգուցեալի ուրիշ ուղբակներն, Լէյն Ռոստոմաբեկը, ընդհանուր հիւանդանոցի եւ բազմաթիւ նշանաւոր անձնաւորութիւններ: Անթիւ պատկեր զրկուած էին: Կրօնական արարողութեան կը նախագահէր Հայերի Առաջնորդը:

Նոյնպէս Արմէնիաի հեռագրուած է թէ:

Նուպար Փաշայի թաղումը կատարուեցաւ այսօր: Յուղարկուութեան հանդէսը խառն դատարանէն ճամբայ ելաւ, ուր պատուի համար զօրագունքեր կեցած էին: Յուղարկուութեան անցած բոլոր ճանապարհին վրայ և գերեզմանատան մէջ զօրքեր եւ ոստիկաններ երկու կողմէն կարգով շարուած էին: Շատ դրօշակներ կային. անթիւ բազմութիւն կար, որ համակրութիւն ցոյց կուտար: Սանութները փակուած էին: Թաղման արարողութիւնը մեծ սրբապատեթիւն ունեցաւ:»

ՈՍ. Ռ. Ն. Լ. ՈՒ Ի. Բ. Բ.

Համբարձում Սահման անուն 40 տարեկան հայը, որ թիւ 42 Ճըրանքին փողոցին մէջ գտնուող արեւելեան գորգի և կապերտի գործարանը կ'աշխատէր, տեսակ մը վերելակով հակերով ապրանք վեր հանելու ատեն՝ չորրորդ յարկին յանկարծ կը սահի ու վար կ'իյնայ. մասը անմիջակտ կը լայ: Այս գոթաղբ հայրենակիցը որդի մը ունի հոս և կ'իյնը Հայրենիք մը գտնուի:

Այս կ'որդի ողբայի արկածներու վրայ վշտանալով հանդերձ, մեր ընթերցողներէն կը խնդրենք որ ծայրայեղ արթնութիւն և զգուշութիւն ի գործ դնեն իրենց գործելու ատենները:

Թիւրքը սոսկում մի է ընկերութեան —Ուաշինկիթընի բարձրագոյն շըրջանակի վերաբերեալ տրիկիններ կը փախչին, երբ Թրքաց դեսպանը խօսիլ կըսկսի:

Այս վերի խորագրով Նիւ Երբք Սընին մէջ յօդուած մը կայ, որով կը ցուցնէ թէ՛ Թրքաց դեսպանը ինչպէ՛ս ահաբեկիչ մը դարձած է Ուաշինկիթընի բարձրագոյն ընկերութեան մէջ, ուր մերկայանջ ու գեղարձագ տրիկիններու հետ պարելու ատեն՝ իր թրքական բարքերը երեւան կուգան ու կըսկսի այնպիսի անպատկառ հարցումներ ուղղել անոնց, որ կը շիկնին, հովհարներն դէմքերնուն կը բռնեն՝ իր երեսը չի տեսնելու նպատակաւ և վերջապէս կը ձգեն ու կը փախչին մէկ կողմ:

Սընը կ'աւելցունէ թէ՛ ասկէ ետքը Ուաշինկիթընի բարձր ընկերութեան վերաբերող ո'ր և է տրիկին ինքզինքը սոսկալի թիւրքին ծանօթացունելու վտանգը գոթուար թէ կրնայ յանձն առնել:

Նախագահ Մաքիլի երկար ատենէ իվեր է որ քննիչ յանձնախումբը քննիչ յանձնախումբի ետեւէ կը կարգէ՝ քննելու վերջի պատերազմին մէջ պատահած բարձր պաշտօնեայներու կողմանէ գործուած զեղծումներն որոց մէջ ամենէ մեծ տեղը բռնած է՝ զօրքերուն տրուած պատրաստեալ մսին խնդրը, որոյ մասին ահագին ամբաստանութիւններ հրատարակ եկան. թէ միւր հոտած է եղեր. թէ վասակար -ասիտներով պատրաստուած է եղեր. թէ զօրքերէն շատեր այդ մսին պատճառաւ հիւանդացեր ու շատեր ալ մեռեր են:

Յիշեալ ամբաստանիչներու շարքին մէջ ամենէն մեծ տեղը բռնեց բանակին ընդհանուր հրամանատարը Զօրավար Մայլս: Մատակարարութեան առաջին պաշտօնեայն Զօրավար Իկրն՝ քննիչ յանձնախումբին առջև՝ իր ինքնապաշտպանութեան տեղեկագրին մէջ խիստ կծու, անարգ և լիբր լեզուով մը յարձակեցաւ ընդհանուր հրամանատարին վրայ՝ անուանելով զայն ստախօս, զրպարտիչ և այլն: Այս բանին վրայ՝ զօրավար

Իկրն զինուորական ատենի առջև գատուեցաւ և պաշտօնակեղաւ՝ իր ազնուականի մը և պաշտօնեայի մը դէմ անվայել վարմունքին համար: Բայց դեռ կը շարունակուի զեղծումներու քննութիւնը, որոց մէջ կը մեղադրուի նոյն իսկ պատերազմական պաշտօնեայն զօրավար Ալճըր:

Սամսըն և Շիլայ ծովակալներուն մէջ ալ բաւական ծանր խնդիրներ ծագած են:

Գիտէք թէ Բիւպայի ջուրերուն վրայ եղող ամերիկեան նաւատորմին ընդհանուր հրամանատար Սամսըն էր: Սանթիակոյի ծովածոցին մէջ սպանիական նաւատորմի ջախջախող պատերազմին ատեն Սամսըն բացակայ էր, ուստի կոիւր կատարուեցաւ Շիլայի հրամանատարութեան տակ. ահա այդ առթիւ յառաջ եկաւ նախանձի խնդիր մը: Սամսընի բարեկամները այդ յաղթութիւններն անոր կը վերագրէին՝ այն հիման վրայ թէ՛ պատերազմը կատարուեցաւ Սամսընի յատակազծին վրայ. իսկ Շիլայի բարեկամները կը պնդեն թէ՛ քանի որ Շիլայն էր անձնապէս ճակատամարտին առաջնորդը, և նրկատելով որ եթէ ծովակալ Սերվեայ յաջողէր իր նաւերով փախչիլ, Շիլայն էր անձը որ այդ անյաջողութեան համար պիտի մեղադրուէր. ուստի ինչո՞ւ պատիւն ալ անոր չը տրուի: Այս առթիւ ճիշդ հիմայ մեծ խնդիր մը յառաջ եկած է: Մովակալ Սամսըն իր սեղեկագրին մէջ ծովակալ Շիլայը մեղադրուած է իբր իրեն հրամանին չանսացող այն ինչ պարագային: Արդ ծովակալ Շիլայն ալ՝ Սամսըն իրեն գրած մէկ պաշտօնական նամակը երեսն բերեր է, որով նոյն ժամանակին ու նոյն խնդրին համար իրեն մեղադրածին բարբորովին հակառակը եղող հրահանգ մը տուած է: Խնդիր է նաև որ այդ պաշտօնագիրը Սամսըն իւր տեղեկագրին մէջ յիշած չէ. ուստի կ'երևի թէ Սամսըն խաղ մը խաղցած է Շիլային վարկը կոտորելու, որպէս զի յաղթութեան բոլոր փառքը իրը միայն ըլլայ:

Տեղեկութիւնք

Փետ. 27, Ուսթըր.

Ուսթըրի Արմէն-Սմերիկեան ակումբը կը յայտարարէ թէ՛ տեղւոյս Հանրապետական կուսակցութիւնը իր ժողովարարը Հայոց արամադրութեան տակ դրած է և ի պահանջը հարկին խոստացած է օգնել: Նաեւ անցեալ Հինգշաբթի ժողով մ'ունեցած են, ուր ակումբին անդամներէն Տիրաք Գ. Բարսեղեան ճօրձ Ուաշինկիթընի, Մ. Թոփանեկեան՝ Մեծն Աղէքսանդրի, և Տթթ. Երեսփ Սարգսյան՝ Լինքընի կենաց գործունէութեանց վրայ ճառեր կարդացած են: Ապա խնդիր ըրած են թէ՛ Թիւրք կառավարութիւնը Հայ քաղաքացիներէն տուրք կը պահանջէ իրենց Հայրենիքի մէջ ունեցած ազգականներէն և բռնութեամբ կը գանձէ: Ժողովը այս խնդրի վրայ այն եզրակացութեան յանգեր է թէ՛ բողոք թիւրքին տուրք վճարող ամերիկեան քաղաքացիներն հաւաքելով՝ անոց ստորագրութեամբ աղերսագիր մը մատուցանելու են Ուաշինկիթընի կառավարութեան՝ պահանջելով որ միջոցներ ձեռք առնէ իրենց անունները թրքի տրոց ստմարներու մէջէն հանելու: Մարտ 23ին գումարուելիք ժողովին մէջ այս խնդրի կարգադրութեանը համար պիտի աշխատին: Յաջողութիւն կը մաղթենք ակումբի ճեռնարկին: ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅՈՒՍՏԱՆԻ ՊԱՏԵՆՏԱԿԱՆ ՀԱՅ ԴԵՐՁԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Երկար տարիներէ ի վեր հաստատուած, ծանօթ ու շահող գերազանց խանութ մը Պոսթըն ֆուլմայիւս աւելբիւր վրայ կը ծախուի 160 տղարի: Նիւ Եորքցիներ կրնան տեղեկութիւն ստանալ վարդ-Մանուշակ անուն երիտասարդէն, իսկ մանրամասնութեանց համար դիմել առ:

Պ. Յակոբեան, Ըսթհայլեն Ա. Պաքս 5, Պոսթըն Մասս.

ԿԸ ՓՆՏՈՒՄ

Գրեգոր Մոսոսեան Գրեգոր 26 տարեկան երիտասարդին ուր ըլլալը կը խնդրուի որ տեղեկացուի կամ ՏԻԳՐԻԱՆԻ և կամ առ Հ. Ն. Եան, 54 Փ. Օ. Պաքս Հէնթըր Ն. Հ.: Երկու նամակ հօրմէն, և երեք ուրիշ շատ կարեւոր նամակներ ունի, սրտեք իրեն յանձնուելու են:

Սաչատուր Տէր Թարութիւնեան անուն անձը, Սերաստացի, իր հիւանդ կինը ու երկու փոքրիկ զաւակները ձգած՝ տարիէ մ'ի վեր է սր կորուած է: Այդ անձին վրայ տեղեկութիւն ունեցողք հաճին գրել ՏԻԳՐԻԱՆ:

ՅՐԳ ԵՄԻՆՆԱԿԱՆ ՀԱՆՆԻՍ ՀԱՅ. ԵՐԻՏ. ԹԱՆԳ. ՄԻՈՒԹԵԱՆ Ի ՆԿԱՍՈՒ

Թանգարանի պահպանման ու ձորացման:

Հանգէսը տեղի պիտի ունենայ Ապրիլ 1, Եարաթ երեկոյ ժամը ճիշդ 8ին ի Կրամբուրի Լայսթրմ' ՀՕԼ, 117 Ուէսթ 23րդ փողոց և 6րդ Ա.Ֆիւրին մօտ:

Սոյն հանդիսին մէջ գլխաւոր տեղ պիտի բռնեն երկու կատակերգութիւններ. «Բարեկեանքանի Անկուտիները» և «Ամերիկայ Փայտաշինները»:

Հանգէսը զուարթ ընելու համար կան նաև շատ ծանօթ նուագողներ ու երգողներ:

Կարգադիր Յանձնախումբը վճարած է որ այդ գիշերուան անուշը պիտի մնայ խնդալու գիշեր:

Արդ, յուսալից ենք որ թէ' զուարճանալու և թէ' օգտակար ձեռնարկի մ'ը օգնելու այս առիթը պիտի չ'փայտունեն մեր ազնիւ ազգայինները:

Հասցեայի փոփոխումներ, Տ. Գ. Չիթեան քաղաք պիտի լինի վաղը կէտիքին, Ժամը ճիշդ 12ին, 17 Ուէսթ 27րդ փողոց, Պոսթըն կիսակողմ, Երբ Կողմի մէջ, Նիւթն է Մեր Պատասխանատուութիւնները:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻԱՆ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ' Հայերէն և թէ' Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցնատու, նամակագրութիւն, հրատարակչի, շրջաբերականներ, տետրակներ ևն: Մեր գրքերը գոհացուցիչ են. տրպագրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

Հ Ի Ր Զ Օ Լ Ա ՄԱՋԻ ԴԵՂ



Կը գործնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը դիտարկելու համար, որ արեւելեան իտուական պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով:

Կը ծախուի Երբ Գրեգոր 26 տարեկան երիտասարդին ուր ըլլալը կը խնդրուի որ տեղեկացուի կամ ՏԻԳՐԻԱՆԻ և կամ առ Հ. Ն. Եան, 54 Փ. Օ. Պաքս Հէնթըր Ն. Հ.: Երկու նամակ հօրմէն, և երեք ուրիշ շատ կարեւոր նամակներ ունի, սրտեք իրեն յանձնուելու են:

ԱՌՈՂԱՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՏԵՆԻՆ Գրեգ Զքթ. Ն. Տաղաւարեան

Կ. Պոլսոյ—Տղապարտութիւն Պէրպէրեան 1898

Այս կարեւոր աշխատութիւնն կը պարունակէ 510 կրօններ. յանձնարարուած է կեդրոնական վարչութեան Ուսումնական խորհրդի կողմէն, ու գնահատուած է ազգային ընդհանուր մամուլէն: Թանգարան մը կատարելով չէ առանց այս կարեւոր հատորին:

Կը ծախուի Սմարտարութեան քով: Գին Մէկ Տօլար միայն:

ՄԵՆՏՈՐ ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ Գրեգ Տ. Մ. ՊէՏԻԿԵԱՆ

Անգլիերէն սորվելու ուղղորդող համար խիստ օգտակար առաջնորդ մ'է այս, որ կը պարունակէ շատ մը կարեւոր գիտելիքներ ու համառօտ բառարան մը: Գինն է միայն 50 սէնթ. կը ծախուի Սմարտարութեան քով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՐ ԵՊԱՐԱՎԱՃԱՌԱՍՈՒՆ Ա. Գրեգորեան

Թիւ 313 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք Պատիւ ունի ծանուցանել թէ սա խանութը բացուեցաւ շաբթուամէջ՝ տեղական և արեւելեան ամէն տեսակ նպարեղէններով: Ապրանայ թարմ, Լինին ու գնորտ շափաւորութիւնը ծանուցանելու համար կը հրատարակուին Հայերն գէթ միանգամ փորձել. մէկ փորձը բաւական է յաճախողը մըը տնջնական ընելու:

Մէկ գին, աման գին. քիչ շահ, շատ առեւտուր: Սա է մեր նշանաբան:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹՈՒՄՍԱՆԵԱՆ ԵՒ ՄՍԻՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՄԱՆԵԱՆ

20½ Հըտտըն փողոց, Պոսթըն, Մասս. Միակ Հայ նպարավաճառ ի Պոսթըն ի գիտութիւն Պոսթընի և շրջակայի հայերուն կը յայտարարենք թէ նպարեղէններու նոր խանութ մը բացած ենք, ուր կը գտնուի ամեն տեսակ ընտիր նպարեղէններ. օրինակ. պուլուր, ծեծած, սոս, սիսեռ, պամեայ, արեւելեան ձեռք աղցուած սուրճ (խահուէ), Սոսիսի պատրուայ, եսպրասի կայլի կայլի:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշգրիտ կը կատարուին գոհացուցիչ գներով:

Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Կը վաճառուին նաև Բաֆֆի գործերը իրենց սովորական գներով:


ԱՊԱՀՈՎ ԵՒ ՓՈՒԹՈՎ

Ստակ կը փոխարեւմ Պօլիս ու ուրիշ քաղաքներ. Պուրաբիոյ ամեն կողմերն, Եգիպտոս, Գահիրէ և Ազէջաններու: արաբոյ կարգի գուհացուցիչ պայմաններով:

Դրամ ղրկելու ուղղութեան եթէ ուրիշ մը երթալէ առաջ մեզ գտնանք ամբողջ մը, գոհ պիտի մնան ամեն կերպով. մեր դրամ ղրկելու միջոցը ամենէ ապահովն է ու կորուստի ամեն վտանգներէ բացարձակապէս հեռի:

ՀԱՅ ԱՏԲԱԶՈՒՐ, 209 East 43d St, N. Y. U. S. A.

ՄԱՋԻ ԴԵՂ



Րանէն: Դուրսի քաղաքներէ կրնան դիմել մեզ հայերէն գրուած նամակաւ: Ռթարմ գեղեր, շափաւոր գներ: ՌԻՆՍՍՈՐ ՏՐԸԿ ԸՍԹՈՐ, Մաքս Հանապրի 472 3րդ անոյն, Նիւ Եորք:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212


ՄԵՐՍԻՍԵԱԿ (Հօլլանդ) ՎԱՃԱՌԱԿԱՆՔ Արեւելեան և Տաճկական Ապրանայ Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ի նիւ Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ անգլանգործներ, սեղանի, մէքէթըի, փրանսոյի ևն. մետաքսայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերլայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միտնգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրքերն շափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո' և է տուն չէ կարող մրցել այս տան հետ:

ԵՄԻՆԻ ԳՐԲԵՐ

Լրացուցաւ Սմարտարութիւնն Վիննաւիկի Միլիթարանց Տղապարտին հետ մասնաւոր կարգադրութիւն մը բրած է՝ նոյն ստորանէն ի լոյս ընծայուած գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառուի համար:

Ո' և է գիրք ստանալ փափաքողները կրնան դիմել մեզ անձամբ կամ նամակաւ:




Ա. ԹՕՓՈՒԶԵԱՆ, ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապարուած կօշիկներ կը կարենք ձեւաւորել և վայելուչ կերպով: Կը նորոգենք հին կօշիկներ շափաւոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Ռոսոնց կօշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կանանց « \$1.25է « \$2.50 Տղայոց և աղջկանց կօշիկներ \$0.50է « \$1.50

Ա. Բ. Ր. Ս. Հ. Ա. Մ. Ս. Ս. Հ. Ա. Ս. Ի

Արտածիչ և ներածիչ Արեւելեան ամեն տեսակ ըմպելիքաց և զանազան նպարեղիքաց,



Թիւ 92 Ուաշինկթըն փողոց և 23 Րէքթըր փողոց, Նիւ Եորք: Սմելը վաճառար է թէ և, բայց դուռն ու մաքուրը գործածելը օգտակար է: Ու՛մէ, գինի, օղի բայց քիչ, և մաքուրը, զուար կամ հիշ:

Իմ Արեւելքէ բերել տուած օղին ու մասթիքան չի կրնար գերազանցել, զի մեր յատուկ գործարանին մէջ պատարասուած է՝ եղբորս անմիջական հսկողութեան տակ: Իմ հին ու նոր գինիներ կրնան գոհ ընել ամեն սր: Նպարեղէններու մէջ առաջնակարգ տեղ մը կը զբաղեն իմ վաճառատուն: Իմ ներածիչ տուած ապրանքներս ստեղծ կը հասնին Արեւելքէն և կը վաճառուին շուտով: Ունիմ ամեն տեսակ արեւելեան նպարեղէններ շաքարեղէններ, զէյթուն, ձիթախիզ, նէրկիլէ և անոր յարակից պարագաները, թրքական ծխախոտ, սիկերէթ ևն. ևն. Ոչ միայն մեր ապրանքներն ընտիր են, այլ գներն համեմատաբար դիւրամատչելի են ամեն դասակարգի անձանց համար:

Մեր գրեց ու անկեղծութեան վրայ դադարաւոր առնելու ուղղորդող յաճախողներուն՝ կրնանք ծանօթ հայերէ վրայ թիւները դրկել:

Գնանձնարարութիւնք գործիք քաղաքներէ ճշգրիտ կը կատարուին: Ամեն հրամանի հետ գնոյն գէթ մէկ տարեկարգ մ'որ դրուելու է կանխիկ, իսկ մնացեալը Սի. Օ. Տի:

Կը վաճառուի նաև պուլուր, ծեծած, հարուէ, Փոսթըր, լէպլէպի ևն. 92 Washington St.

ԳՐԻԳՈՐ ՊՕՅԱՃԵԱՆ

Կօշկավաճառ և կօշկակար Թիւ 248 Ետի Ըսթրիտ, Փրօվիտէնս. խանութիս մէջ կը վաճառուին ամեն տեսակ նոր և հին կօշիկներ՝ աժան գներով: Կը նորոգենք հին կօշիկներ շափաւոր գներով: Արանց հին կօշիկներու, ձեռքով կարուածի համար, \$ 1.25, իսկ հաստարկ կերպով նորոգուածի ընդհանուր հին կօշիկներու գներն 50—85 սէնթ են: Վստահաբար կրնամ ըսել թէ մեր յաճախող հայրենակիցք միշտ գոհ պիտի մնան՝ մեր արդէն ունեցած յաճախողքաց նման: